

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

06.05.2011թ.

գ. Ախպրաձոր

Հիմք ընդունելով ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 2011թ. հունվարի 21-ի թիվ 5-Ա կարգադրությունը հանձնաժողովը՝ նախագահությամբ մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Ի. Ասատրյանի, անդամությամբ՝ աշխատակազմի քարտուղարության պետ Յու. Թաթարյանի, աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետի տեղակալ Ա. Գասպարյանի, նույն վարչության ՀԳՄՍՄԳՀ բաժնի վարիչ Հ. Օհանյանի, աշխատակազմի զարգացման ծրագրերի բաժնի վարիչ Վ. Մնացականյանի, աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ Վ. Պողոսյանի, մասնակցությամբ համայնքի ղեկավար Լավրենտի Ղազարյանի և նրա աշխատակազմի ուսումնասիրեց մարզի Ախպրաձոր համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի գործունեությունը 2009-2011թթ ընթացքում: Ուսումնասիրությանը մասնակից դարձվեց նաև մարզպետարանի աշխատակազմի հողաշինարարության և հողօգտագործման բաժնի մասնագետ Ա. Զարոյանը: Ուսումնասիրվեցին ներքոհիշյալ բնագավառները՝

1. Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը իրավական ակտերի ընդունման բնագավառում

Համայնքի ավագանին 2009թ. գումարել է 8 նիստ, ընդունել է 9 որոշում, 2010թ. գումարել է 9 նիստ և ընդունել՝ 9 որոշում, 2011թ. գումարել է 2 նիստ և ընդունել է 3 որոշում:

Համայնքի ղեկավարը 2009թ. ընդունել է 4 որոշումներ, 2010թ.՝ 5 որոշումներ, 2011թ. անցած ժամանակահատվածում՝ 1 որոշում: Համայնքի ղեկավարը արձակել է կարգադրություն՝ 2009թ. 13, 2010թ.՝ 4, 2011թ.՝ 1-ը: Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարը արձակել է հրաման 2009թ.՝ 2, 2011թ.՝ 1-ը:

Համայնքի ավագանին իր 30.01.2009թ. թիվ 1 որոշմամբ հաստատել է համայնքի 2009թ. բյուջեն՝ 11.289.6 հազար դրամ եկամտային մասով, 11289.6 ծախսային մասով: Նույն նիստի թիվ 2 որոշմամբ հաստատվել է համայնքի ղեկավարի աշխատակազմի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնական դրույքաչափերը: 2.04.2009թ. թիվ 2 նիստով ավագանին որոշում է կայացրել գյուղնշանակության հողերի վարձակալության մրցույթ անցկացնելու մասին: 27.04.2009թ. թիվ 3 նիստում քննարկվել է համայնքի սեփականության գյուղնշանակության հողերի մրցույթ անցկացնելու հարցը:

02.12.2009թ. թիվ 8 նիստում քննարկվել է 2010թ. բյուջեն: Նույն նիստի մյուս որոշմամբ հաստատվել է համայնքի ղեկավարի աշխատակազմի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնական դրույքաչափերը /համայնքի ղեկավարի աշխատակազմում հաստատվել է 5 հաստիք, որից 3-ը համայնքային ծառայողներ են/: 01.03.2010թ. թիվ 2 նիստում քննարկվել է համայնքի գյուղնշանակության հողատեսքերը վարձակալության տրամադրելու մասին:

15.04.2010թ. թիվ 3 նիստում քննարկվել է համայնքի սոցիալապես անապահով ընտանիքների տրամադրել 75000 դրամ օգնություն /3 ընտանիքի յուրաքանչյուրին

25000-ական դրամ/։ 10.06.2010թ. թիվ 5 նիստը որոշել է վերջին գանգի կապակցությամբ դպրոցի շրջանավարտների միջոցառման համար հատկացնել 80000 դրամ։ 20.10.2010թ. թիվ 7 նիստում որոշվել է դպրոցի ուսուցիչների ուղեվարձ տրամադրել 100000 դրամ։ 15.12.2010թ. թիվ 8 նիստում որոշվել է համայնքի սոցիալապես անապահով 2 ընտանիքներին տրամադրել 25000-ական դրամ օգնություն։ 22.12.2010թ. թիվ 9 նիստում քննարկվել և հաստատվել է համայնքի 2011թ. բյուջեն՝ 8914.5 հազար դրամ եկամտային և նույնքան ծախսային մասերով։

12.03.2011թ. թիվ 1 նիստում լսվել է գարնան գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման հարցը։ Նույն նիստում անդրադարձ է եղել բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման հարցին և հանձնարարվել է համայնքի ղեկավարին միջոցներ ձեռնարկել բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման համար։

28.04.2011թ. թիվ 2 նիստում լսվել է համայնքային սեփականության հողերը վարձակալության տրամադրելու մասին, սահմանվել են վարձակալության մեկնարկային գները՝ 2-րդ կարգի վարելահողին՝ 1 հա-ի հաշվով 7500 դրամ, 3-րդ կարգի վարելահողերին՝ 6100 դրամ, 4-րդ կարգի վարելահողին՝ 4000 դրամ, իսկ 5-րդ կարգի հողերին՝ 2000 դրամ։ Ուսումնասիրվող ժամանակահատվածում ավագանին չի հաստատել որևէ գույքագրման փաստաթուղթ, որով չի կատարվել << <ՏԻՄ>> օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջը։ Խախտվել է նաև ավագանու նիստերի հրավիրման պարբերականությունը այն է՝ չի կատարվել << <ՏԻՄ>> օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը։ /Այսպես՝ 22.12.2010թ. թիվ 9 նիստից հետո, 2011թ. թիվ 1 նիստը կայացել է 12.03.-ին/։

Համայնքի ղեկավարի հիմք ընդունելով ավագանու 20.05.2009թ. որոշումը իր 01.06.2009թ. թիվ 9 որոշմամբ համայնքի ղեկավարի աշխատակազմի հաստիքացուցակից հանվել է համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնը։ Գյուղապետի 28.05.2010թ. թիվ 14 որոշմամբ ստեղծվել է աֆրիկյան ժանտախտի հետևանքների վերացման հանձնաժողով։ 10.09.2010թ. թիվ 15 որոշմամբ ստեղծվել է համայնքային սեփականության գույքագրման հանձնաժողով, իսկ 20.12.2010թ. թիվ 16 որոշմամբ ստեղծվել է համայնքի անասնազվխաքանակը ուսումնասիրող հանձնաժողով։

Ինչպես համայնքի ավագանին, այնպես էլ համայնքի ղեկավարը չեն հաստատել քաղաքացիների ընդունելության կարգը և օրերը, որով իսկ չի կատարվել << <ՏԻՄ>> օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ և 33-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները։ Համայնքի ավագանու, համայնքի ղեկավարի և աշխատակազմի քարտուղարի որոշումները, կարգադրությունները և հրամանները որպես իրավական ակտեր չունեն վերնագրեր, որով իսկ չի պահպանվել << Իրավական ակտերի մասին >> << օրենքի 40-րդ հոդվածի պահանջը, այն է՝ որ իրավական ակտի վերնագիրը պետք է համապատասխանի իրավական ակտի բովանդակությանը և հակիրճ տեղեկատվություն պարունակի դրա կարգավորման առարկայի վերաբերյալ։

Իրավական ակտերը մեծ մասամբ չունեն նախաբան, որով չի կատարվել << Իրավական ակտերի մասին >> << օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ մասի պահանջը, այն է՝ որ անհատական կամ լրկալ /ներքին/ ակտի նախաբանում կամ բովանդակության մեջ պետք է նշվի թե որ նորմատիվ իրավական ակտի, դրա մասի

համաձայն կամ ի կատարումն է ընդունվում: Պահպանված չեն իրավական տեխնիկայի կանոնները, այսինքն չունեն կետեր, ենթակետեր կամ պարբերություններ, չեն նշվում ուժի մեջ մտնելու ժամկետները, որով չեն կատարվել <<ԻԱՄ>> օրենքի 37-րդ հոդվածի 3-րդ կետի, 41-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ կետերի դրույթները:

Պետական իրավական փորձաքննության և պետական գրանցման չեն ներկայացվել ընդունված նորմատիվ իրավական ակտերը /Ավագանու կանոնակարգը, համայնքի բյուջեն, համայնքի զարգացման ծրագիրը, տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը/, որով իսկ չի կատարվել <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի պահանջները:

Մշակված, հաստատված և գործողության մեջ չի դրված համայնքի ղեկավարի աշխատակազմի կանոնադրությունը, որով չի կատարվել ՀՀ <<ՏԻՄ>> օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջը:

2. Համայնքային ծառայության բնագավառ

ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006թ. նոյեմբերի 21-ի <<<< Գեղարքունիքի մարզի գյուղական համայնքների ղեկավարների աշխատակազմերի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին>> թիվ 205-Ա հրամանով հաստատվել է մարզի Ախարածոր համայնքի ղեկավարի աշխատակազմի 4 համայնքային ծառայության պաշտոններ /հավելված թիվ 2/

1/ համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար /ծածկագիր՝ 2.1-1/

2/ համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետ /ծածկագիր՝ 3.1-1/

3/ աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /ծածկագիր՝ 3.2-1/

4/ աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ /ծածկագիր՝ 3.3-1/

01.06.2009թ. գյուղապետի թիվ 10 որոշմամբ աշխատակազմի առաջին կարգի մասնագետը /ծածկագիր՝ 3.2-1/ ազատվել է աշխատանքից, որից հետո գյուղապետը ՀՀ օրենքով սահմանված կարգով դիմել է ՀՀ ՏԿՆ այդ պաշտոնը անվանացանկից հանելու խնդրանքով, որը բավարարվել է:

Գյուղապետի 15.12.2006թ. թիվ 1 որոշմամբ ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներով հաստատվել է համայնքային ծառայողների պաշտոնների անձնագրերը, իսկ 16.12.2006թ. թիվ 2 որոշմամբ համայնքային ծառայողները նշանակվել են համապատասխան պաշտոններում:

Աշխատակազմի քարտուղարը ատեստավորվել է 19.06.2008թ., որից հետո գյուղապետի 24.06.2008թ. որոշումով նրան շնորհվել է ՀՀ համայնքային ծառայության 3-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան:

10.03.2009թ. գյուղապետի թիվ 8 որոշմամբ ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով ՀՀ ՏԿՆ 20.01.2009թ. թիվ 37-Ա հրամանի պահանջը աշխատակազմի քարտուղարը ընդգրկվել է համայնքային ծառայության գլխավոր պաշտոնների 2-րդ ենթախմբում /ծածկագիր՝ 1.2-1/, նույն որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել գյուղապետի

15.12.2006թ. թիվ 1 որոշման 1-ին կետը: Գյուղապետի 14.10.2009թ. թիվ 11 որոշմամբ ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006թ. օգոստոսի 29-ի «ՀԾ մրցութային և ատեստավորման հանձնաժողովների օրինակելի աշխատակարգերը հաստատելու մասին» թիվ 12-Ն հրամանով հաստատված կարգը հաստատվել է համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը:

25.03.2010թ. թիվ 13 որոշմամբ լրացում է կատարվել աշխատակազմի քարտուղարի պաշտոնի անձնագրում, որի 7-րդ գլխի 11-րդ կետի «<լ>» ենթակետից հետո պետք է լրացվեին «<լա>», «<լբ>», «<լգ>», «<լդ>» ենթակետեր, կապված գինակոչի, զորահավաքի և վարժական հավաքների կազմակերպման պարտականությունների, սակայն լրացումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի պահանջների խախտումով: Հետևապես իրավական ակտերում կամ դրանում հաստատված հավելվածում լրացումը պետք է իրականացվեր «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ կետի հիմքով:

Առաջարկվում է ղեկավարվելով «ԻԱԱ» ՀՀ օրենքի 75-րդ հոդվածով անհրաժեշտ է չեղյալ համարել գյուղապետի 25.03.2010թ. թիվ 13 որոշումը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի դրույթներով, նոր որոշմամբ, լրացում կատարել համայնքի ղեկավարի 10.03.2009թ. թիվ 8 որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի /քարտուղարի պաշտոնի անձնագրի/ 7-րդ գլխի 11-րդ կետի «<լ>» ենթակետից հետո:

Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի 26.11.2009թ. թիվ 1 հրամանով, հիմք ընդունելով մրցութային հանձնաժողովի 23.11.2009թ. թիվ 2 որոշումը, Ռ. Գասպարյանը նշանակվել է աշխատակազմի առաջին կարգի մասնագետի պաշտոնում /6 ամիս փորձաշրջանով/ և ժամկետը լրանալուց հետո 26.05.2010թ. թիվ 3 հրամանով նրան շնորհվել է համապատասխան դասային աստիճան:

26.11.2009թ. թիվ 2 հրամանով, հիմք ընդունելով ատեստավորման հանձնաժողովի 23.11.2009թ. եզրակացությունը աշխատակազմի առաջատար մասնագետին /ծածկագիր՝ 3.1-1/ շնորհվել է ՀՀ համայնքային ծառայության առաջին դասի առաջատար ծառայողի դասային աստիճան:

Համայնքային ծառայողների անձնական գործերը վարվում են ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2006թ. նոյեմբերի 7-ի «Համայնքային ծառայողների անձնական գործերը վարելու կարգը հաստատելու մասին» թիվ 20-Ն հրամանով հաստատված կարգի պահանջների խախտումներով: Աշխատակազմի քարտուղարի անձնական գործերում չկար նաև գույքի և եկամուտների հայտարարագրման մասին ՏՀՏ տեղեկանքը, որը համաձայն «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետի «<բ>» ենթակետի համաձայն պաշտոնից ազատելու հիմք է:

Բավարար չէ աշխատակազմի գործավարությունը, նամակագրությունը և արխիվային գործը, որով չեն կատարվել ՀՀ «ՏԻԱ» օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջը:

Ղեկավարվելով նույն օրենքի 30-րդ հոդվածի 5-րդ կետի դրույթներով անհրաժեշտ է ապահովել ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների և

ուղերձների հրատարակումը /հրապարակայնությունը/, դրանք տեղակայել բնակչության համար տեսանելի վայրում ամրացված տեղեկատվական վահանակի /ստենդ/ վրա:

3. Համայնքի սոցիալ-տնտեսական կառուցվածքը և ենթակառուցները

Ախպրաձոր համայնքը Գեղարքունիքի մարզի բարձր լեռնային բնակավայրերից է և գտնվում է ծովի մակարդակից 2280 մ բարձրության վրա: Համայնքի ղեկավարն է Լավրենտի Ղազարյանը, որը նշված պաշտոնում աշխատում է 1996 թվականից:

Մինչև 1988թ. գյուղում ապրել են հայեր և ադրբեջանցիներ, 1988թ. բնակվում են միայն հայեր:

Գյուղում ներկայումս ապրում է 378 բնակիչ, տնտեսությունների քանակը 100-ն է, կան 82 առանձնատներ: Ժամանակավոր բացակայում է 13 բնակիչ: Մշտապես ներկա 365 բնակչից տղամարդիկ են 191-ը, կանայք՝ 174-ը:

Բնակչության ընդհանուր թվաքանակից ընդամենը զբաղվածներ են 165-ը, այդ թվում գյուղատնտեսական աշխատանքներով՝ 140-ը, այլ բնույթի աշխատանքներով՝ 25-ը:

Համայնքի բնակիչներն ունեն 412 գլուխ, խոշոր եղջերավոր անասուններ, որից կովեր՝ 213, 945 գլուխ ոչխար, 63 գլուխ այծ, 4 ձի, 1110 թև թռչուններ:

Համայնքի բնակիչներից թոշակառուներ են 32-ը, հաշմանդամներ՝ 6-ը, <<Փարոս>> համակարգում են կամ ստանում են ընտանեկան նպաստ՝ 34-ը: 5 ընտանիքներ փախստականներ են:

Գյուղում կան 9-րդ դարի կիսավեր մատուռ, խաչքարեր:

Համայնքի ավագանին բաղկացած է 5 հոգուց, աշխատակազմը՝ 3 հոգի /աշխատակազմի քարտուղար, հաշվապահ, գանձապահ/:

Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը բաղկացած է՝

- 1/ ջրամատակարարման ներհամայնքային համակարգ – 14 կմ
- 2/ ներհամայնքային նշանակության ճանապարհներ և փողոցներ – 3 կմ
- 3/ ներհամայնքային կամուրջներ – 2
- 4/ գերեզմանատուն – 1
- 5/ ոռոգման ջրի համակարգ – 5 կմ

Գյուղում համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ չկան: Գյուղը առևտրի սպասարկման ոլորտի օբյեկտներ չունի, չկա փողոցային լուսավորության համակարգ:

Համայնքի գյուղապետարանի վարչական շենքը կառուցված է 1964 թվականին, այն 2008թ. փլվել է և ներկայումս աշխատակազմը իր գործունեությունն իրականացնում է համայնքի ղեկավարի Լ. Ղազարյանի առանձնատան մի սենյակում:

Գյուղը չունի փոստի բաժանմունք, որի պատճառով բնակիչներին սպասարկում են հարևան Մաքենիս համայնքի փոստի աշխատակիցները:

Գյուղը շրջկենտրոնից գտնվում է շուրջ 23 կմ հեռավորության վրա: Բնակչության սպասարկման նպատակով, բացի շաբաթ ու կիրակի օրերից, գործում է ավտոբուսային երթուղի, օրական 1 անգամ:

Սակայն բնակավայր տանող ամբողջ ճանապարհը, սկսած Ծովակ համայնքից մինչև Ախպրաձոր, ամբողջությամբ անբարեկարգ է, ձմռան առանձին օրերին

ծյունաբքերի պատճառով երբեմն այն փակվում է և դառնում անանցանելի: Ճանապարհի սպասարկումը կատարվում է <<Վարդենիսի ճանշին>> ՍՊԸ կողմից:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում ճանապարհների փոսալցման, վերանորոգման աշխատանքներ չեն կատարվել:

Համայնքը գազաֆիկացված չէ:

Աղբահանությունը կատարվում է ավանդական եղանակով: Համայնքն ունի 1 անասնաբույժ /Խաչիկ Խաչատրյան/, որը աշխատում է պետպատվերի շրջանակներում և վճարվում գյուղնախարարության կողմից: Ուսումնասիրվող ժամանակամիջոցում բնակչության անասունների շրջանում համաճարակների դեպքեր չեն արձանագրվել:

Համայնքում կա միջնակարգ դպրոց /տնօրեն Գինեվարդ Ղուկասյան, ունի բարձրագույն կրթություն, տնօրենի պաշտոնում է 1991 թվականից/: Դպրոցն ունի 73 աշակերտ, 15 մանկավարժ, որոնց զգալի մասը հարևան համայնքների բնակիչներ են: Դպրոցի ձեղնահարկը վերանորոգված է, շենքը կարիք ունի ներքին հարդարման ու վերանորոգման:

Գյուղն ունի բուժկետ, որը գտնվում է միջնակարգ դպրոցի շենքում, կապիտալ վերանորոգված է, ունի 1 սպասարկող բուժքույր /Էլիզար Պետրոսյան/, ով հանդիսանում է Ծովակ համայնքի բուժամբուլատորիայի աշխատակցուհի:

Համայնքի խմելու ջրի ներհամայնքային ցանցը կառուցված է 1960-ական թվականներին, 5 կմ երկարությամբ, ջուրը ստացվում է գյուղից շուրջ 14 կմ հեռավորության վրա գտնվող <<40 աղբյուրներ>> հանդամասից:

<<Գյուղզարգացման>> ծրագրով 2004թ. փոխվել է 2700 մ, խողովակաշարը, մինչ այդ կառուցվել էր 6 կմ խողովակաշար: Անհրաժեշտ է փոխել նաև 1700 մ երկարությամբ ասբեստյա խողովակաշարը:

Ոռոգման ջուրը ստացվում է 3 տեղամասերից, Մաքենիսի ոռոգման ջրագծից՝ 3 կմ, 2 կմ երկարությամբ հողային հունով առուններով, ջուրը վերցրվում է գյուղի տարածքով անցնող առվակից: Չնայած զգալի կորուստներին, ոռոգման ջուրը հիմնականում բավարարում է շուրջ 49.1 հա տնամերձ հողամասերի ոռոգման պահանջը:

Գյուղում կա 32 միավոր գյուղտեխնիկա և բեռնատար ավտոմեքենաներ:

4. Հողաշինարարության և հողօգտագործման բնագավառ

Գեղարունիքի մարզի Ախարաձոր համայնքը ունի գյուղատնտեսական նշանակության հետևյալ հաշվեկշիռը.

Հ/Հ	Հողատեսքեր	ընդամենը հա	քաղաք. սեփ.	համայնք. սեփակ.
1.	Վարելահող	732.18	304.04	428.14
2.	Խոտհարք	70.75	69.95	0.8
3.	Արոտավայր	1313.68		1313.68
4.	Գյուղ. այլ	278.72		278.72
Ընդամենը		2395.33	371.09	2021.54

Տնամերձեր

50.71

Համայնքային 428.14 հա վարելահողերից օգտագործվում է ~~324.62~~ հա, որից պետական գրանցում ունի 197.9 հա:

Արոտավայրից օգտագործվում է ~~500.0~~ հա, որից վարձակալության պայմանագիր է կնքվել 2011թվականի ապրիլի 28-ին կայացած վարձակալական մրցույթի ժամանակ 20.0 հա:

2009թ. վարձավճարի մասով պլանային 5093.0 հազար դրամի մեջ ընթացիկ տարվա վարձավճարը կազմում է 1513.0 հազար դրամ, արոտի վարձավճար՝ 580.0 հազար դրամ, նախորդ տարիների ապառքը կազմում է 3000.0 հազար դրամ: 2009թ. պլանային ցուցանիշը կատարվել է 36.1%-ով կամ 1830.6 հազար դրամով: 2010թ. պլանային 2500 հազար դրամը կատարվել է 2377.9 հազար դրամով կամ 95.1%-ով, 2011թ. 01.05. դրությամբ պլանային 2300 հազար դրամի մուտքային մասը կազմել է 900.9 հազար դրամ կամ 39.2%:

2009-2011թթ. արոտավարձ չի գանձվել: Վարձավճարի մասով ապառքը կազմում է 3000.0 հազար դրամ:

Հողի հարկի մասով.

Հարկատեսակ	2009թ.			2010թ.			2011թ.		
	պլան	փաստացի	%	պլան	փաստացի	%	պլան	փաստացի	%
Հողի հարկ	1230.6			1230.6			1230.6		
Ապառք	1000.0			1000.0			1205.6		
Ընդամենը	2230.6	4573.1	205.1	2230.6	2307.7	104.7	2436.2	740.4	30.4

Հողի հարկի մասով՝ ելակետային 1230.6 հազար դրամ, պլանային 2230.6 հազար դրամի մուտքային մասը կազմել է 4573.1 հազար դրամ, 2010 և 2011թթ. համապատասխանաբար 103.7%, իսկ 2011թ. տարեկան 2436.2 հազար դրամ մուտքային մասը կազմել է 740.4 հազար դրամ կամ 30.4%:

Հողի հարկի մասով ապառքները կազմում են ~~1300.0~~ հազար դրամ, որից տույժերը կազմում են 6750.0 հազար դրամ:

Ախպրաձոր համայնքում 2009-2011թթ. <<Հայաստանի Հանրապետություն>> օրաթերթով տրվել է հայտարարություն գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի վարձակալական մրցույթների անցկացման համար:

Ախպրաձոր համայնքի գյուղատնտեսական արոտավայրերը օգտագործվում են համայնքի բնակիչներին պատկանող գյուղատնտեսական կենդանիների կողմից, բայց արոտավարձ չի գանձվում: 2011թ. ապրիլի 28-ին կայացած վարձակալական մրցույթում վարձակալության է տրվել 20.0 հա արոտավայր:

Գյուղատնտեսական 200 հա վարելահողերը և արոտավայրերը օգտագործվում են Հողային օրենսգրքի 76-80-րդ հոդվածների պահանջների խախտումներով:

Համայնքում գյուղատնտեսական նշանակության հողատեսքեր չեն օտարվել:

5. Համայնքի ղեկավարի գործունեությունը ֆինանսների բնագավառում

Ախարածորի համայնքում, սեփական եկամուտների կատարողականը բնութագրող փաստացի ցուցանիշները 2003-2008թթ. գտնվել են 6.1%-ից /2003թ./ 33.8%-ի /2008թ./ միջակայքում, ինչը ցածր է եղել թե Վարդենիսի տարածաշրջանի, թե մարզի համապատասխան միջին ցուցանիշներից: Չնայած սեփական եկամուտները 2009թ. կատարվել են 86.3, իսկ 2010թ.՝ 97.7%-ով, այնուամենայնիվ, դրանք զիջել են մարզի 101.6 և 98.4 % միջին ցուցանիշներին: Համայնքում, 2011թ. մայիսի 1-ի դրությամբ, դեռևս առկա են խոշոր գումարների հասնող ապառքներ, հողի հարկի գծով **13810.0** հ/դրամ /որից տույժեր՝ **13810.0** և հողի հարկ՝ 7060.0 հ/դրամ/: Աշխատավարձի հողվածով նախորդ տարիների 2011թ. մայիսի 11-ի դրությամբ կազմում են **7231.7** հ/դրամ, սոցվճարինը՝ 500.0 հ/դրամ և այլն:

Բերենք համայնքի 2009-2010թթ. և 2011թ. մայիսի 1-ի դրությամբ բյուջեների կատարման վերաբերյալ հաշվետվական տվյալները.

Եկամուտները	2009թ.			2010թ.			2011թ.		
	պլան	փաստացի	%	պլան	փաստացի	%	պլան	փաստացի առ1.04.11թ.	%
Հողի հարկ	2230.6	4573.1	205.1	2230.6	2307.7	103.5	2435.6	740.4	30.4
Գույքահարկ	220.6	125.3	56.8	74.6	119.6	160.9	74.6	15.9	21.3
Հողի վարձավճար	5093.0	1836.8	36.1	2500.0	2377.9	95.1	2300.0	900.9	39.2
Ընդ. սեփ. եկամուտներ	7574.2	6535.2	86.3	5534.8	5405.2	97.7	4810.2	1657.2	34.5
Պատ. լիազորույթ.	729.6	729.6	100.0	729.6	600.0	82.3	600.0	-	-
Դոտացիա	7965.8	2965.8	100.0	3725.9	3725.9	100.0	3504.3	1168.1	33.3
Ընդամենը եկամուտներ	11269.6	10230.6	90.8	9260.7	9131.2	98.6	8914.5	2825.3	31.7

Չնայած համայնքում 2008թ. հունվարի 1-ի դրությամբ առկա են եղել 21000.0 հ/դրամ հողի հարկի ապառքներ /որից տույժեր՝ 11000.0 հ/դրամ/, իսկ 2011թ. մայիսի 1-ի դրությամբ դրանք կազմում են **13810.0** հ/դրամ /որից տույժեր՝ 6750.0 հ/դրամ/, այնուամենայնիվ 2009-2010թթ. վարչական բյուջեի պլանային եկամուտներում, կազմած ժամանակացույցի համաձայն, ներառվել են ընդամենը 1000.0-ական հազար դրամի ապառքներ, իսկ 2011թ. պլանում՝ 1200.0 հ/դրամ:

Հողի հարկի տարեկան հաշվարկային գումարը կազմում է 1230.6 հ/դրամ: <<Հողի հարկի արտոնություններ տրամադրելու մասին>> ՀՀ օրենքով 2011թ. մայիսի 1-ի դրությամբ 40 հողի հարկ վճարողների տրվել է 1980.0 հ/դրամի արտոնություն: Հողի հարկի ապառքների և դրանց նկատմամբ հաշվարկված տույժերի վերաբերյալ ներկայացված հաշվետվություններում առկա են անճշտություններ և գյուղապետարանի աշխատակազմը լուրջ միջոցներ պետք է ձեռնարկի հողի հարկի բազան ճշգրտելու, ապառքները ըստ վճարողների ճշտելու և գանձելու ուղղությամբ:

Նույնը գրեթե վերաբերում է հողերի վարձավճարներին, որի 2009թ. պլանում չնայած ներառվել են 3000.0 հ/դրամի ապառքների գանձումներ, իսկ 2010-2011թթ. պլաններում՝ 1000.0-ական հազար դրամների, սակայն դրանց հավաքագրումը չի ապահովվել ըստ պատշաճի /2009թ. 5093.0 հ/դրամի դիմաց մուտքը կազմել է ընդամենը 1836.8 հ/դրամ/, իսկ ապառքների վերաձված հողի վարձավճարների համար չեն հաշվարկվել սահմանված չափերի տույժեր:

2009-2011թթ. համար գույքահարկի գանձման պլաններ են սահմանվել 74.0-ական հազար դրամ կամ տպավորություն է ստեղծվում, որ փոխադրամիջոցների առք կամ շարժ այդ ժամանակաշրջանում համայնքում չի եղել, ինչը իրական չէ:

Համայնքում դեռևս առկա են նախորդ տարիներին կուտակած աշխատավարձի խոշոր չափերի հասնող պարտքեր, որոնց վերաբերյալ մարզպետարան ներկայացված հաշվետվություններում թույլ են տրվել անճշտություններ:

Նախկինում և ներկայումս աշխատող մարդկանց աշխատավարձերի հաշվառման քարտերի տվյալների համաձայն նախորդ տարիների պարտքը, թվով 12 հոգու մոտ 2009թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է 14374.5 հազար դրամ, ավելացրած 3% սոցվճարի պարտքը, ընդամենը 14700.0 հ/դրամ: Բացի այդ, 1996-2007թթ. և սոցվճարի հոդվածով առաջացել է 2348.8 հ/դրամ պարտքեր:

2008թ. ընթացքում, ըստ գյուղապետարանի հաշվետվության տվյալների, առաջացել են 1968.5 հ/դրամի աշխատավարձի և 161.7 հ/դրամ սոցվճարի նոր պարտքեր: 2009թ. 1-ին եռամսյակում, դատարանի վճռով, ԴԱՀԿ-ի միջոցով գյուղապետարանի հաշվից գանձվել է 1503.5 հ/դրամ սոցվճարի պարտքի դիմաց:

Աշխատավարձի նախորդ տարվա պարտքերից, ըստ գանձապետական հաշվետվության և համայնքի կողմից ներկայացված տեղեկությունների ու աշխատողների աշխատավարձերի անհատական գանձումների տվյալների, 2009թ. ընթացքում մարվել են 2979.6, 2010թ. ընթացքում՝ 4190.0 հ/դրամ և 2011թ. առաջին 4 ամիսներին՝ 1500.0 հ/դրամ: Միաժամանակ, 2009թ. վճարվել է 1350.0 և 2011թ. հունվար-ապրիլ ամիսներին 500.0 հ/դրամի սոցվճարի նախորդ տարիների պարտքեր:

Կատարված հաշվարկներից հետո, 2011թ. մայիսի 1-ի դրությամբ, նախորդ տարիների աշխատավարձի պարտքը կազմում է ~~5812.2~~ հ/դրամ, որից՝

1. Ղազարյան Լավրենտին – 1852.5 հ/դրամ
2. Աբրահամյան Ժորային – 2231.2 հ/դրամ
3. Մանուկյան Սարգսին – 1235.2 հ/դրամ
4. Սարգսյան Մայիսին – 175.0 հ/դրամ
5. Աբրահամյան Յուրիկին – 157.9 հ/դրամ
6. Կիրակոսյան Միշային – 180.1 հ/դրամ
Ընդամենը - 5812.2 հ/դրամ

Մարզպետարան ներկայացրած առ 1.05.2011թ. նախորդ տարիների պարտքերի վերաբերյալ հաշվետվությունում աշխատավարձի հոդվածով պարտքը ցույց է տրված 7138.0 հ/դրամ: 1328.5 հ/դրամի տարբերությունը բացատրում են եկամտահարկի և 3% սոցվճարի պարտքերի առկայությամբ, ինչը լուրջ չէ: Առաջարկվեց՝ ճշգրտել աշխատավարձի և սոցվճարի հոդվածներով պարտքերի իրական չափերը և 2011թ. հունիսի 1-ի դրությամբ ներկայացնել իրականությանը համապատասխանող տվյալներ:

2009թ. գյուղապետարանում պահվել են 4 հաստիքային միավորներ, 30.0-ից 60.0 հ/դրամ դրույքաչափերով, ընդ որում՝ գյուղապետինը՝ 70.0, քարտուղարին և հաշվապահին՝ 40.0-ական, գանձապահին և պահակին՝ 30.0-ական հազար դրամով: 2009-2011թթ. աշխատավարձի և սոցվճարի հոդվածներով պարտքեր չեն կուտակել:

Համայնքում չի ձևավորվել ֆոնդային բյուջե և սոցիալական նշանակության հիմնախնդիր, բյուջեի միջոցների հաշվին, չի լուծվել: Վարչական բյուջե հավաքագրված գումարները, ներառյալ դոտացիաներն ու պատվիրակված լիազորությունների իրականացման համար ՀՀ պետբյուջեից ստացված միջոցները, հիմնականում ուղղվել են աշխատավարձի ու սոցվճարների ընթացիկ և նախորդ տարիների պարտքերի վճարումներին: Այսպես, բյուջետային փաստացի ծախսերում աշխատավարձերին ու սոցվճարներին ուղղված ծախսերը կազմել են 2009թ.՝ 96.8%, 2010թ.՝ և 2011թ. 4 ամսում՝ 95.7%:

2011թ. մայիսի 1-ի դրությամբ վարչական բյուջեում միջոցների մնացորդը կազմում էր 210.0 հ/դրամ, **ֆոնդային բյուջեում գումար չկար:**

Հաշվապահական հաշվառման աշխատանքներում կային թերացումներ, բացված չեն հաշվապահական հաշիվներ, չէր վարվում գլխավոր գիրք, հողի հարկի, գույքահարկի գանձումների վերաբերյալ ամփոփ տվյալները չեն ներկայացվում օպերատորին գրանցման և այլն:

Ե Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն







Առաջարկել մարզի Ախպրաձոր համայնքի ղեկավարին՝

1. համայնքի ավագանու քննարկմանը ներկայացնել գույքագրման արդյունքները.
2. ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ կետի և 33-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով մշակել, հաստատել և գործողության մեջ դնել համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից քաղաքացիների ընդունելության կարգը.
3. իրավական ակտերն ընդունելիս խստորեն պահպանել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի, 37-րդ հոդվածի 3-րդ կետի, 41-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ կետերի դրույթները.
4. ընդունվող իրավական ակտի նախաբանում կամ բովանդակության մեջ պետք է նշվի թե՛ որ նորմատիվ իրավական ակտի դրա մասի համաձայն կամ ի կատարումն է ընդունվում.
5. տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվող նորմատիվ իրավական ակտերը ՀՀ «Իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի համաձայն ուժի մեջ են մտնում պետական լիազորված մարմնի կողմից պետական գրանցում ստանալուց հետո, այսինքն՝ պետական գրանցման են ենթակա ավագանու կանոնակարգը, համայնքի բյուջեն, պետական տուրքերի ու վարձավճարների դրույքաչափերը, համայնքի ղեկավարի աշխատակազմի հաստիքացուցակը, թվաքանակը և դրույքաչափերը, համայնքի զարգացման ծրագիրը.
6. ՀՀ «ՏԻՄ» օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի մեջ դնել համայնքի ղեկավարի աշխատակազմի կանոնադրությունը /նոր խմբագրությամբ/.
7. ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի դրույթներով չեղյալ համարել գյուղապետի 25.03.2010թ. թիվ 13 որոշումը և հիմք ընդունելով նույն օրենքի 70-րդ հոդվածի դրույթները սահմանված կարգով լրացումներ կատարել գյուղապետի 10.03.2009թ. թիվ 8 որոշմամբ հաստատված

- թիվ 1 հավելվածի /քարտուղարի պաշտոնի անձնագիր/ 7-րդ՝ «Իրավունքներ և պարտականություններ» գլխի 11-րդ կետի մեջ «<<» ենթակետից հետո.
8. համայնքային ծառայողների գործերի վարումը իրականացնել « տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006թ. նոյեմբերի 7-ի «Համայնքային ծառայողների անձնական գործերը վարելու կարգը հաստատելու մասին» թիվ 20-Ն հրամանով հաստատված կարգի պահանջներին համապատասխան.
 9. համայնքային ծառայության գլխավոր պաշտոն զբաղեցնող աշխատակազմի քարտուղարի կողմից 2010 և 2011թթ. համար գույքի և եկամուտների մասին հայտարարագրի մասին ՏՏ-ից տեղեկանք չներկայացնելու դեպքում համաձայն «ՀԾԱ» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի այն պաշտոնից ազատման հիմք է:
 10. կարճ ժամկետում կարգավորել աշխատակազմի գործավարության նամակագրության և արխիվային գործի վարումը: Ապահովել ավագանու և գյուղապետի որոշումների և ուղերձների հրապարակայնությունը.
 11. համայնքի սեփականության հողատեսքերը վարձակալության տրամադրել ՀՀ հողային օրենսգրքի 76-80-րդ հոդվածների պահանջներին համապատասխան.
 12. կոնկրետ միջոցներ ձեռնարկել նախորդ տարիների ապառքների հավաքագրման և աշխատավարձերի ապառքների մարման ուղղությամբ.
 13. կարճ ժամկետներում վերացնել հաշվապահական հաշվառման մեջ եղած թերությունները, դրանք են՝ բացել հաշվապահական հաշիվներ, վարել գլխավոր գիրքը, համակարգչում կամ փաստաթղթային եղանակով պահել յուրաքանչյուր տարվա ամփոփ տվյալները, ճշգրտել աշխատավարձերի և սոցվճարների իրական չափերը:

Առաջարկություն - տեղեկանքը քննարկել մարզպետի նիստում, նախապատրաստել մարզպետի որոշման նախագիծ և առաջարկել համայնքի ղեկավարին կարճ ժամկետում վերացնելու տեղ գտած թերությունները:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ՝

 Ի. ԱՍԱՏՐՅԱՆ
 ՅՈՒ. ԹԱԹԱՐՅԱՆ
 Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆ
 Տ. ՕՀԱՆՅԱՆ
 Վ. ՆԱՅԱԿԱՆՅԱՆ
 Վ. ԴՈՂՈՍՅԱՆ